ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2023 թվականի կարիքների համար «ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման ծրագրով նախատեսված օժանդակ տեխնիկական միջոցների ձեռքբերման «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2023/13» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «29» մայիսի 2023թ.
Ժամը՝ 9:15

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Կարեն Գրիգորյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կապի և փոստի վարչության կապի բաժնի պետ

հանձնաժողովի անդամներ՝

Սամվել Հարությունյան՝ «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ գլխավոր տնօրենի տեղակալ

Կոնստանտին Կուրբանյան՝ «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ գլխավոր տնօրենի խորհրդական

հանձնաժողովի քարտուղար՝

Դիանա Գրիգորյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի փորձագետ

1. Հանձնաժողովը ուսումնասիրեց ստացված հարցումը՝ այն է
«2-րդ չափաբաժին /Ձեզ հարկավոր է դիզելային թե բենզինային գեներատոր/»

Հանձնաժողովը որոշեց՝

1. Ստացված հարցմանը տրամադրել պարզաբանում
2. Հաստատել հրավերի պարզաբանման հայտարարության տեքստը՝
3. տեխնիկական բնութագրում հստակ նշված է՝ Գեներատոր բենզինային վառելիքով սնուցվող՝ ինքնավար գեներատոր, ավտոմոբենայի շարժիչից անկախ, նախատեսված մոնիթորինգի շարժական կայանի տրանսպորտային միջոցի տեխնիկական խցիկում տեղակայելու համար՝ -

Հզորությունը 2.5-3 կՎտ, միաֆազ - Աղմուկի մակարդակը՝ գեներատորը պետք է ունենա աղմուկի և վիբրացիայի ցածր մակարդակ: Գեներատորի աղմուկի մակարդակը չպետք է գերազանցի 52 դԲ 2 մետր հեռավորության վրա, առանց արտաքին ձայնամեկուսիչի - Ավտոնոմ ռեժիմ 10 և ավել ժամվա համար - 2 x 230 Բ փոփոխական հոսանքի ելք՝ 16Ա հոսանքի ուժով - Հաճախականությունը՝ 50 Հց - Վառելիքի սպառման ցուցիչ Օդափոխման համակարգ: Երաշխիքային ժամկետ՝ առնվազն 1 տարի

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ **Կարեն Գրիգորյան**

Անդամներ՝ _____ **Սամվել Հարությունյան**

_____ **Կոնստանտին Կուրբանյան**

Քարտուղար՝ _____ **Դիանա Գրիգորյան**